



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Young People

Keep Right

89199
2 - 28

1924

ԿՈՄԱԼՄԱՆԱԿ

ԶԱՐԵԴՑԻ





891.99

9-28

ՆԱՐԵՐԵ ԵՍ ԳՐՈՒՄ
ԿԱՐՈ ՀԱԼԱԲՅԱՆԻ

891.99
9-28

ԿՈՄԱԼՄԱՆԱԿ ԶԱՐԵՒՑԻ



ԽԱՐԵՐՆ ԸՆ ԳՐՈՒՄ
ԿԱՐՈ ՀԱԼԱԲՅԱՆԻ

ՄՈՍԿՎԱ

1924

16.07.2013

70753

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՈԼՈՐ ՊՈԵՏՆԵՐԻՆ

III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ-Р. Կ. II.

ԱՆՏԱՆՏԻՆ-ՄԵՆՔ

ԼԵՆԻՆ

ՄԱՐԵ ԱՇԽԱՐՀԱ



23588-59



ԲՈԼՈՐ ՊՈԵՏՆԵՐԻՆ

Հեղտ և ձեզ !
 Սիրում եք սեր սերել դուք միշտ :
 Թոքերդ շվի շինել՝
 յերգում եք սեր :
 Առիթը գա՝ կարող եք գործարան ել սիրել :
 Առիթը գա՝ պայքար ել կսիրեք :
 Իւկ յես,
 վոնց վոր տրիբուն,
 վոնց վոր ըմբռատ ըմբիշ —
 եղ բոլորին թքե՛լ եմ դեռ յերեկ :

Յերեկ
 դուք
 յերգում եիք սերը :
 Յերգում եիք՝ սիրուն, գարուն, առու :
 Բայց... յեկավ Հոկտեմբերը —
 ու ցամաքեց «առուն» !

Հոկտեմբերը յեկավ —
 ուզեց մկան :
 Կամք ուզեց Հոկտեմբերը —
 վոր աշխարհում հորդի :
 Հոկտեմբերը
 մասսաների ճակատն հակադեց հսին :
 Հոկտեմբերը բանեց մեր կոկորդից —
 հրամայեց՝
 —շինի :



* ZUUR-ARM. SSR *

Հ. Ա. Մաշնիկյան
Ա. Մաշնիկյան

Լսում ես,
 ԵՇ,
 ՊՌ.
 Չի՞ն շինի՛ հիմա դու:
 ՈՒԵԼՍ շինի՛ մաշինի թե կարաս:
 ՅԵՐԳԵԼ աղջիկ թե շոգի—ոգուտ չկա.
 ՄԵԼ Ե:
 ՇԻՆԻՐ վողոց քարած:
 ՇԻՆԻՐ կանալ!

 Հոկտեմբերը բերին կրակով:
 Հոկտեմբերը բերին սովորական մարդիկ:
 Նրանք, վոր—գիտեին՝
 առաջ դեռ—հա՛ց տուր ուտենք,
 առաջ դեռ—կերակուր,
 հետո—ինքնիրեն կհասնենք
 թե գարնանը,
 թե առվին,
 թե վարդին:

 Հասարա՞կ Ե:
 Իհա՛րկե:
 Վոնց վոր ակսիո՛մա:
 Ինչքան ել յերկինք համբառնաք—
 Ե՛ս Ե,
 Ե՛ս Ե,
 Ե՛ս Ե:
 Հասկանո՞ւմ ԵՔ՝
 —վո՛չ մի պառնաս!
 ԹԵԿՈՒՂ պլողետպառնաս:
 ԹԵԿՈՒՂ պլողետպոԵղիա:
 ԵսպԵ՛ս Ե:
 Ե՛ս Ե:
 ՅԵՐԳԸ յերգ Ե:
 ԹԵԿՈՒՂ շոգի զրեք:

ԹԵԿՈՒՂ պլողետպառնետ!
 Լսում ԵՔ.
 լավ Ե—լո՛ւ արածել,
 լավ Ե վոռնալ,
 քան յերգով գործարան սնել!

 ՅԵՐԿԻՆՔԻՑ չենք ընկել մենք:
 Վոչ Ել թոշունն Ե մեզ բերել:
 Վոչ Ել քամին:
 ՅԵՐԿԻՐՆ Ե մեզ ծնել:
 Հողը,
 վողոցը,
 հանքը,
 գործարանը:
 Հոկտեմբերը բերեց մեզ դինամիտ:
 Հիմի պայթենք պիտի:
 Բայց վո՛չ թե յերգում միամիտ—
 այլ դուրսը,
 դաշտում,
 ձեր դռանը!

 Լսում ԵՔ.
 ԵՇ,
 ՊՌ,
 ամեն ռանդի!
 Բավական Ե քերթեք մեր նյարդերի կաշին!
 Ել անպե՛տք Ե:
 Դե՞ն նետեք ձեր շվին:

 Իսկ յես—
 լավ Ե չեկա գնամ,
 լավ Ե—ագիտբաժին:
 Յես—զինվոր,
 տրիբուն,
 բալշեվիկ!

III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ — Բ. Կ. Պ.

b'j,

բարձրացիր!

Գնա՞նք—գնա՞նք—գնա՞նք!

Հայաստանից—Տունիս:

Դոն:

Լոնդոնից—Դունայ:

Միլիոն տոնն ուժ!

Միլիարդանոց տոննաժ!

Յերկաթից ու կամքից ե մեր շոգենավլ:

Մեր շոգենավլ—մենք ենք:

Մեր կամքը միլիարդի—մեր դիմամոն ե:

b'j. b'j,

ո՞վ կա վրեն!

Ով վոր կա—պատրաստ միշտ:

Ով վոր կա—թող չքնի:

Դեռ հեռու ե ցամաքը:

Փոթորիկը դեռ ընդդիմանում ե!

Յամաքը դեռ ո՞ւր ե.

ահա լոզաննը,

ահա մո՛ւրը:

Մեր նավը կոչվում ե դիկտատուրա.

ոեյսը—եստեղից կոմունիզմ!

Մեր դեմ վոչի՞նչ չկա վոր դիմանա:

Յերկի՞նքը.

յերկի՞նքը ծեր կանանց խարի թո՛ղ:

կը ո՞նը.

աստվածային կապե՞ր...

Մեր կը ո՞նը կոչվում ե—«Կապիտալ»,

մեր կապը—Բ. Կ. Պ.

Մեր դեմ—յեղե՛մը Մարքսի դժաճ,
մեր դեմ—կոմունը!

Մե՛րն ե,

կիսաբա՛ց ե:

են, վոր յերազե՛լ ենք.

սավետական կարգեր + ելե՛քտրոֆիկա՛ցիա!

Մեզ գտել—

նետել ե չոկտեմբերը:

չոկտեմբերը—

զնդանն եր մեր գնդերի:

չոկտեմբերը կապեց չնդուչին ու Դունայ:

չոկտեմբերը բերեց մեզ—ոռոմը:

չոկտեմբերը բերեց մեզ—թնդանոթ:

Միլիոն տոնն ուժ!

Միլիարդանոց տոննաժ!

չոկտեմբերը մեր տոնն եր ընդհանուր!

կամք:

Զգված մկա՞ն եր չոկտեմբերը:

Ռումբ:

Թմբուկ:

Թնդյո՞ւն եր չոկտեմբերը!

չոկտեմբերը—շրապնե՛լ եր:

Չնդացի՞ր եր:

չոկտեմբերը զնդաց—

եյ,

բարձրացի՞ր ել!

Դեպի բուրգեր ցրտի,

դեպի բերդեր արյան—

եյ,

բարձրացի՞ր,

ոլորետարիատ!

Յելավ:

Թուղաց:
 Պայթեց:
 Յելավ հաղթեց:
 Հազար Քերզոն թող գա,
 հազար Դրո—
 մեր դեմ ել ի՞նչը կդիմանա!
 Մեր մի թեզը—Մոսկով ե,
 ձգվել ե Յերեվան,
 անցել ե Շահթախտից
 ծայրը ո՞ւր ե.
 —Պերու ե,
 Ուռուր ե.
 անցել ե Ցելոնը,
 Սինգապուրը—
 հասել ե Հիմալա!

Եյ-Եյ,
 հիմի պատրաստ,
 ընկեր,
 մեր վառողը թող չթացանա՛ ել!
 Նեղը թող մեր թափը չկապե!

Մեր դրոշն ե—III Ինտերնացիոնալը,
 մեր կապը—P. K. Ա.-են!

ԱՆՏԱՆՏԻՆ—ՄԵՆՔ

Անտանտա,
 տե՛ս,
 քեզ լիզում ե եսոր
 յերկաթե,
 թեժ մի քրքիջ:
 Յես կըկին յերգում եմ քեզ—մահ:
 Վոնց վոր վոխ ցնդած բանվորի—
 զգում ես կամքը ճգմած
 Ուուրի:

Եսսեն,
 քեզ
 յերկաթե թաթով
 մինչեվ յե՞րբ,
 յե՞րբ ճգմե նա !
 Լսում ես՝ յերկաթո՛վ գա թող,
 թող թոփի քանդո՛ղ հեքյաթով,
 վոր լոկ վոխ քեզ մնա !

Եյ,
 Ուռուր
 կամ մեզ հետ, կամ սա՛.
 լսում ես՝ կամ կոփվ, կամ կոշիկ ! —
 Հիլֆերդինդ —
 Վելս վաքսով վաքսած
 գարշապար Ստիննեսի—Ֆոշի !

Թո՛ղ,
 Ուռուր,
 թող հու՛ր քեզ մնա բաժին:
 Ուռուր,
 եզուց—

Կփոխվի հացի նա:
Լսում ես.
Կա՞նք.
Կքանդենք!
Լսում ես,
Ստիճնեսի հանդեպ—
Կա
Յերբորդ
Ինտերնացիոնալ!

Մե՞նք կանք:
Կա կամք:
Կա միլիոն, տրիլիոն չանախվանհարեթ!
Լսում ես
Լե՛-
Նի՞ն կա,
Կամ
Կա
Բ.
Է.
Ա.

Վերջապես կամքը կա քո զորեղ,
Ոռու՛ր,
հու՛ր գու,
զսպած զսպանակ:
Դու գիտե՞ս,
զիտե՞ս թե նրանց
մինչեվ ուշը կարող ես թոցնել—
յերկաթե շղթաղ թե բանաս!

Մինչեվ ուշը...
Բերլինից,
Փարիզից—

մինչեվ Մա՞րս,
Ուրա՞ն,
թե Լուսին—
իզութողը Բերլինի բողի
ու ֆոշի փոշին!

1923. IV.

፳፻፲፭

Всем, всем, всем...
Нашим:
Умом:
Будем:
...Чему-нибудь и всем...

Ի՞նչ.
Ճառե՞ր,
հեռագի՞ր.
սու՞զ գուցե կամ
—ինարկե չե!

Սուզը—
առել դեմ—
սառել ե բանվորի կոկորդում
Տեղը—
վոխ մի դղոք
հորդում ե դուքս:

Եյ,
Հզա՛ք,
Հմուտենա՛ք.
հազա՛ր են,
բյու՛ր են,
միլիսա՛րդ են,
ավելի՞ն են.—
ու եղ
բոլորը
մերերան—

—Ленин!

Գիտե՞ք թե աշխարքի արգանդից
ինչքա՞ն հանճարեղ մարդիկ,
ինչքա՞ն, ինչքա՞ն կըումվել,
կամ հսդիկ Գանդի—
անթիվ
յեղել են,
կան դեռ,
ու կգան.—
այնինչ իլիչը—մեկ ե,
ուրիշ իլիշ—դժվար թե,
ուրիշ իլիշ—չկա:

Դասակարգը
դար դարի յետեվից
մնել ե իլլիչին։
Դասակարգը
դար դարի յետեվից—
հյութեր ե նյութել։
Անգամ ջրկիրը Տիբեթի
ավել ե իլլիչի ուղեղին—
մի թել։

ԹԵԼ-ԹԵԼ,
 ՆՅԱՐԴ-ՆՅԱՐԴԻ յԵՄԵՎԻց,
 ՆՅԱՐԴԻց թե քո, թե իմ—
 առել ե դասակարգը—
 տվել ե ԼԵՆԻՆԻՑ:
 ԹԵԼ-ԹԵԼ,
 ՆՅԱՐԴ-ՆՅԱՐԴԻ յԵՄԵՎԻց
 հյուսել ե —

բարդ
 կանվա:
 Յեվ հիմա
 իլյիչը—
 վախճանված...
 Մեռած կամ.
 կամ չկա...

 ԶԵ՛, պրոլետար!
 իլյիչը—իմ մե՛ջ ե,
 քո մե՛ջ ե,
 նրա մե՛ջ ե,
 իլյիչը—կա!

 կա—դասակարգը:
 Դասակարգը
 պարզե՛լ ե լենինին, իբրեւ դեվիդ:
 Դասակարգը հակաղըե՛լ ե հնին—
 իւ
 լենինին:
 Ու կըպարզե՛ հնին
 Լ Ե Ն Ի Ն Ի Զ Մ !

 Ե՛,
 գուք,
 Ռոկֆե՛լեր,
 Ստի՛նսես,
 Մորգան կամ!
 Լոում եք՝
 մենք դեռ կգանք!
 Մեր բանակը կանցնի՛ դեռ ձեր աշխարքով:

 Դեռ կգա իլյիչը,
 վոր մանի՛ համաշխարհային Սովորկոմ!

Մոսկվա 1924. 23. I

— 88 —

ՄԱՐԶ ԱՇԽԱՐՀԱ

Աշխարհ, հարթել ենք արդեն քեզ!
 Առել ենք,
 Առ ենք:
 Ե՛—
 Ճա՛-նա՛-պա՛րհ !
 Ինչքան հանճար կա—դա:
 Ինչքան ձեռ կա—ձեվ թող ծռե:
 Զիտայից մինչեւ Միչիգան—
 Կռենք,
 Կռե՛ք,
 Կռե՛ն !

ԶԵ՛՛, դու յեռա՛,
 մի՛տ, դու գտի՛.
 Կյանքը—կռան,
 կամքը—դինամիտ:

Հանճա՛ր, ել թո՛ղ դու անճարին !
 Անճար չկա՛ ել:
 Ե՛—
 Ճա՛-նա՛-պա՛րհ !
 Աշխարհ, կարո՞ղ ես՝ մեղ ճարի՛:
 Մենք քեզ ճանկել ենք ել,
 մենք քեզ ճանկել ենք ել—
 առույդ,
 արագ,
 արի՛:

Ել մեր հատու



23588-59

Կամքը կտանք—
քե՛զ, գիտություն,
քե՛զ, աշխատանք !

Մեր մեջ յեռում ե տիյեղերքը:
Մեր կրծքերում ե՝
ե՛յ,
դոդացե՛ք !
Մեր կյանքը—կամք ե,
ձիք ե,
ձեռք ե:
Կարող ենք հողը սղոցել !

Կյանքն—աերո,
կամքն—ոդաչու,
Ուզենք—
կուզե՞ք ուզեք—
արե՛վը զենիթից մեղ կտա չու !

Եյ, ցնդածներ !
Մարս, լուսին, Ուրան !
Մե՛զ խնդացեք !
Ուռա՛, ուռա՛, ուռա՛ !

Մենք—պրոլետար,
կամքը մեր—ոռոմբ:
Ա՛—ոռոռո...
-- Միշտ հեռուն, հեռուն, հեռուն, հեռուն !

ՅԵՍ ՅԵՎ ԻԼՅԻԶԸ

Մի եպիզոդ իմ ճանապարհորդությունից՝ կատար-
ված Ուելսի ժամանակի մեքենայով դեպի 2500 թ.

Դեպի ժամանակը!...
Մկան չկա հոգնած!
Յես ել,
դու ե՛լ,
նա ե՛լ:

Սղոցում ե ողը,
տարիները,
կամքս—մեքենա,
միտքս—Ուելս:

Թռչում եմ:
Թռչում ե միտքս:
Անցնում ե տարիները:
Անցնում են տարիները—20,—50,—100...

Ես ի՞նչ ե.
Վոնց վոր արթնանում եմ:
Նայում եմ շուրջ՝
ուր եմ.
շուրջս—անձանոթ ե.
Ինչ վոր մի բան դեմից մոտենում ե փութով...
Դեմս—աշխարհն ե,
յերկրագունդը—
չ տարի հետո...

Ներքեվը —
ցանցեր, ցանցեր, ցանցեր:
Ներքեվում հեվում են:
Հեվում ե հովը:
Հովը վոնց վոր թեզ ե:
Սահում եմ:
Վոնց վոր ինձ պահում են:

իջնում եմ:
 թռչում եմ:
 Յես թեթեվ եմ:
 Բայց չեւ
 Յես անշարժ եմ:
 Հեղում ե սիրտս:
 Թեփում ե դեպի ինձ—
 այն ի՞նչ ե --
 Վարը —
 բարձրանում ե . . .
 Արեվ ե.
 աշխարհ ե.
 յելնում ե ներքեվից:

 Վոնց վոր լիֆտ —
 յելնում ե արեվը:
 Գալիս ե դեպի ինձ:
 Բարձրանում ե:
 Ճառագայթը—թեվ ե յետեվից նետած:
 Յետեվից—յերկրագունդը.
 մոտ ե.
 մոտենում ե.
 սահում ե դեպի ինձ.
 Ճգվում ե դեպի վեր —
 ետաժին ետած:

 Վեր,
 Վեր,
 Վեր —
 ահա ներքեվը կիվը,
 ահա Մոսկվան...
 Այդ ի՞նչ ե.
 Վոնց-վոր ճոխնչ ե.
 Պատարում ե շունչս...
 — Շնչում եմ:

Թեթեվ եմ:
 Յես կամ:

 Թրա—լոկ!
 Հասա:
 իջնում եմ:
 Կարծես Մոսկվան ե:
 Ե՞յ,
 ո՞վ կա եղտեղ —
 տարե՛ք ինձ Բ. Կ. Ռ.

 Զեն հասկանում:
 Զգուշ նայում են ինձ:
 Յես վախից դողում եմ:
 Թեփաթափ եմ:
 — ի՞նչ.
 Հկա՞ .
 Վո՞նց թե չկա...
 Լավ:
 Տարեք ինձ Բ. Կ. Բ.
 Ենտեղ ինձ խինդով կընդունեն:
 Կընդունեն, վոնց վոր հարկն ե:
 Տեսնո՞ւմ եք գլխարկս.
 Վրան ա'սող ե.
 Վոչինչ, վոր մաշված ե կոշիկս.
 Հեք հավատում.
 Ի՞նչո՞ւ.
 ահա տոմսս.
 յես—բալշեվիկ եմ !
 Զեն լսում:
 Ծիծաղում են:
 Գնում են:
 Զե'.
 կանգնած են.
 ընթանում ե—գետինը.

գետինը սողում ե.
խփում ե ուղեղիս արյունը.
— ա,
հասկաննեմ եմ.
եսպես եր գուշակում դեռ կամիլ
ֆլամմարիոնը ! . . .

Նայում եմ շուրջս —
հիանում եմ:
Ահա —
յերկընքից իջնում ե մի քաղաք!
Ահա մարդիկ.
մարդիկ.
— մարդ ե թե սարդ!
Մոտենում ե մեկը.
վոնց վոր ծեր ե.
(յես նրան մի զբքում կարդացել եմ!) —
Զե՛.
փոքր ե.
յերեխա ե.
փախավ:
Ահա ուրիշնեկավ:
Նայում ե աչքերիս:
Աչքերը սուզվում են մեջս:
Աչքերը վոնց վոր ինձ քերում են:
Քորում են ուղեղս:
Ի՞նչ.
ազգանունս...
Ազգանունս — Զարենց ե,
իսկ Զարենցը
դուք
հասկանում եք ! ! !

Խա-խա-խա-խա ! —
ծիծաղում ե:

Ուրախ ե,
ի հարկե նա ինձ հասկանում ե:
Մեքենա միտք ունի յերեվի:
Են, վոր կարդացել եմ:
Ահա —
սահում ե դեպի ինձ.
բռնում ե թեվս.
բարի ե.
յերեվի — պլոփեսոր ե.
ծեր ե:
— ի՞նչ.
լուսնից.
չե՛, յես յերկրացի՛ եմ,
Ծանոթ.
— վո՞չ մի ծանոթ:
Սա ի՞նչ ե.
ախ, հա —
մեր ժամանակ, գիտե՞ք, սա — գնդացիր եր:
Բայց ներեցեք պարոն !
Զի՞...
Եսպես ձի՞...
Զե՛մ տեսել յերբեք յես !
Մեր ձին կենդանի եր:
Մեր ձին խոտ եր ուտում:
Ներեցե՞ք, մեր ձին — գեղեցի՛կ եր!
Ավտո՞.
հա.
ավտոն գեռ ելի հասկանում եմ...
Բայց ներեցե՞ք պարոն.
ավտոն չեր թոշում — նա գնում եր!
Ի՞նչ.
թոչե՞նք.
յես, գիտե՞ք, մի քիչ վախենում եմ !
Վո՞նց.
սրա՞ն.

հենց ես վոքրի՞ն.
 հենց ես գնդացիրի՞ն...
 վոր ցրի՞...
 թոցնի՞...
 չվախենա՞մ...
 լավ:
 Յես պատրաստ եմ:
 Նստեցինք գնդացիրին,
 գնդացիրը—գնաց:
 Թուավ,
 Թուավ,
 Թուավ,
 մնացին ներքեվը—արեվը,
 լուսինը,
 Մարսը,
 Սատուրնը —
 մոլորակներ...
 Տակից —
 յելում եր դեպի վեր,
 դալիս եր դեպի մեզ,
 բարձրանում եր,
 սահում եր,
 թոշում եր ինչ վոր գունդ ահագին...
 Գնդացիրը թոշում ե:
 Նա ինձ մոտ ե:
 Նստել ե յետեվից:
 Խրել ե միտքը մեջս.
 յերեվի քննում ե.
 կարդում ե միտքս.
 հետեվում ե...
 Ինչքան ուզում ե հետեվի! —
 Յես գիտեմ, վոր միտքն անքննին ե!
 Թոշում ե գնդացիրը:

Նա վոնց վոր խոսում ե.
 — ի՞նչ.
 կի՞նը.
 — հինը չկա:
 Սանահի՞ն...
 Ո, կարծեք յերազո՞ւմ եք!
 Հիմի կուզեք սվին!
 Ամաչեցե՞ք, պարո՞ն.
 ի՞նչ թնդանոթ! ...
 Տեսնո՞ւմ եք՝
 վարը —
 աշխարհնը —
 կոմուն ե ընդհանուր!
 Հինը —
 քնել ե.
 հինը չկա:
 ի՞նչ.
 — այստեղ յեղել ե Յերսովնարկումը,
 այստեղ — Յերուեվտրիբունալը,
 այստեղ — Յերշեկան!
 կենտրոնը —
 Նյու-Յորքն եր.
 Հետո—Միջիգանը.
 Հիմի չկան:
 Մոտեցանք:
 Աշխարհն ե!
 Նա ե:
 Դեռ հեռվից ճանաչում եմ:
 Ահա Ատլանտական ովկիանը!
 Ահա Ամերիկան:
 Ահա Խաղաղականը:
 Ահա իտալիան, վոնց վոր կոշիկ...
 Բայց ի՞նչ ե.
 վոնց վոր ուրագա՞ն ե.

Վոնց վոր փոշի...
 Մշուշ ե:
 Զե.
 ապակի՛...

 Ու ապակու տակից—յերկիրը, յերկրագունդը!

 Ուր.
 Յերեվա՞ն...
 Ծիծաղում ե:
 Մորուքը բավում ե ուսիս:
 Մոտեցանք:
 Վոնց վոր լողանում ենք:
 Իջնում ենք հյուսիսից:
 Թռանք հարավ ելի:
 Ահա իջանք:
 Են ի՞նչ են.
 Ինչու են թեվավոր.
 առում եք՝ մա՞րդ են.
 խա՞խա՞խա՞—
 նման են հավերի!

Յերեվանն ե...
 Ծերո՛ւկ, խարեցի՛ր ինձ:
 Վոնց վոր Նյու-Յորկ լինի,
 վոնց-վոր Սան-Ֆրանցիսկո—
 (մի բան վոր չեմ տեսել յերկուան ել!)—
 Նայես ի՞նչ կա հիմի մեր թաղումը...

Դնում ենք մի կողմ գնդացիրը:
 Անցնում ենք փողոցով:
 Ծիծաղում են:

 Մտածում եմ հայեր են!
 Կհասկանան գոնե!

Ե՛յ,
 ի՞նչ ե եստեղ!
 Մոտենում են:
 Շարվում են շուրջու:
 Ասում եմ անունս:
 Գուցե հիշեն...
 — Զարենց!
 — Զարենց!
 — Զարենց! —
 Հեռանում են...
 Ախ,
 կրոնե՛մ հիմի:
 ծերո՛ւկ, ծերո՛ւկ, ծերո՛ւկ !
 Միթե սա—Յերեվա՞նն ե.
 սո՛ւտ ե.
 լսո՞ւմ ես. Յերեվան չես բերել դու ի՞նձ!
 Յերեվանն—ավան եր.
 Յերեվանը—վանի պես քոսոտ եր!
 Ճշում եմ:
 Փնջում եմ:
 կանչում եմ ծերուկին:
 Ուղեղս սղոցում ե դողը:
 Ե՛յ
 ծերո՛ւկ,—
 Յերեվա՞նն ե ասում ես.
 — գե ցո՞ւյց տուր Մասիսը, թե կտըող եմ!
 Մասի՞սը.
 Նա՞.
 աբա ձյո՞ւնը...
 Լսո՞ւմ ես,
 Ե՛յ,
 — ձյո՞ւնն եմ ուզում—սիսամէկը...
 ի՞նչ շենքեր են, ենտեղ,
 են ի՞նչ բուրգեր են, ապակի...
 են ի՞նչ ե բարձրանում...

Սողում ե հողը:
 Փախչում ե իմ տակից:
 Իմ հոգին վոնց վոր կաշկանդել են:
 Եյ,
 ծերուկ, ծերուկ, ծերուկ! —
 Զկա:
 Զքացել ե:
 Յես—ցնդել եմ!
 Վազում եմ քաղաքով:
 Մարդիկ,
 մարդիկ,
 մարդիկ...
 Մարդիկ են վերջապես, թե ուրու են!..
 Նայում եմ
 մոտ են.
 մտնում են մեջս.
 Թռչում են իմ միջով—
 ել չե՞ս բռնի!
 Եյ-Եյ—
 Ել հեռու են!
 Եյ,
 դուք,—
 Վո՞րտեղ եմ—ասացե՛ք խնդրեմ.
 ասացե՛ք խնդրեմ—վո՞րտեղ եմ յես!
 Նայում են յերեսիս—
 ծիծաղում են.
 լուռ են.
 կամ իրենք են խուլ վերջապես,
 կամ յես ինքս—խուլ եմ! . .
 Վազում եմ եղտեղից.
 Վոնց վոր ինձ են վազում.
 յես անշարժ եմ.
 մի բան վազում ե մեջս.
 յես ինքս—վազք եմ:
 Յեվ վո՞չ մի ծանոթ!

Ծերուկ, ծերուկ, ծերուկ!
 Վոնց վոր չի ե'լ յեղել:
 Վոնց վոր հրաշք եր:
 Փախչում եմ խուճապով:
 Ուղեղս սղոցում ե դողը:
 Աչքերս պայթում են սալսափից:
 Փախչում եմ:
 Եյ,
 մարդիկ,
 մի խո՞սք լոկ,
 մի շուկ.
 հասկանո՞ւմ եք՝ ցնդում եմ.
 —աշա-չո՞ւմ եմ!...
 Տեսնո՞ւմ եք՝ հասնում ե մահս.
 ահը գրկել ե ինձ.
 մարդիկ,
 խնդրո՞ւմ եմ ձեզ,
 ամեն ինչ ձեղ կանեմ.
 կոզնեմ ամե՞ն բանով...
 Անցնում են:
 Խուլ են:
 Ամբողջ տիյեղերքում—և վո՞չ մի ծանոթ!
 Փախչում եմ քաղաքով:
 Մտնում եմ հրապարակը:
 Այն ի՞նչ ե.
 մոտենում ե...
 ինձ մոտենում ե մեկը!
 Յես նրան կարծես ճանաչում եմ!
 Յեսել եմ...
 կարծես դեռ յերեկ եր...
 —Այս,—
 Մոտեցավ...
 Մոտեցավ...

Բայց ի՞նչ ե.
աշտարակ ե.
մարդ ե...

Վերջապես ! —
— Ռակետ երակլնիթարթը !

Վերջապես գտա !
Սա ծանոթ ե:
Ինձ կպատմե վողջը.
Հի պահի վո՞չ մի բան.
կնստի մոտա.
հետո կլինի...
Ահա ժպտում ենա.
յելնում ե դեմս.
նա ի՞նքն ե,
ծանոթը,
հարազատը...
Մոտենում եմ. —

— ԲՅՈՒՏՏՆ Ե ԼԵՆԻՆԻ ! . . .

Նա՝ ե:
իլյիչը!
Եր,
լսեցե՞ք.
շուրջս յեկե՞ք,
հավաքվեցեք մոտա.
յես նրան ճանաչում եմ !
Նա ինձ ծանոթ ե !
Եր,
դուք,
յեթե կաք !
Յես — գիտե՞ք — աշխարհից եմ.
իմկ սա աշխարհ ե,

ի՞նչ ե.
դուցե պլանե՞տ ե մատակա!

ե —
մե՛կ ե,
մե՛կ ե,
մե՛կ ե !

Եր
դո՞ւք,
խուրդա-մուրդա' ! —
Հասկանո՞ւմ եք՝ նրան յես տեսել եմ !
Ապրել ենք մի դարում.
յե՞րբ եր.
վոնց վոր դեռ յերեկ եր...
Հասկանո՞ւմ եք՝ նրան յես լսել եմ ! ..

Ակնիթարթը —
ի՞նչ եր...
Հասկանո՞ւմ եք՝ եղքա՞ն տարի հետո,
աշխարհում, վոր փոխվել ե —
հանդիպում ենք — յես և... իլյիչը !
Նա ինձ նայում ե ժպիտով.
ինձ ճանաչում ե նա տարիների տակից...
— Եր, ժամանակ !
դո՞ւ գեթ !
Խիսդս դո՞ւ ընդունիր դարերից.
Ճիշտ.
ինդությունս ռակետ ! ..

ՍԱՏԻՐ-ԱԳԻՏ

ՏԻՐԱՊԵՏՈՂՆԵՐԻ ԴԵՄքԸ

C. C. C. P.

U. S. A.

R. F.

D. R.

C. C. C. P.


(Մեզ մոտ)
(Միջնական ժամանակ պրոլոց)

Հայթերցող!
Մենք,
յես ու դուք,
ապրում ենք C. C. C. P.-ում:
Խորհուրդների յերկրում:
Այսինքն՝ յերկրում մի,
ուր տեր են բանվորն ու գյուղացին:
Տեր են վո՞չ թե ենպես,
խոսքով,—
բառացի:
Ինձ ու ձեզնից բացի—
C. C. C. P.-ում ապրում են 150 միլիոն։

II

Զարմանում եք միայն։
Բայց մեր տերիտորիան—
բռնում ե աշխարհի վեցերորդը։
Ի՞նչ,
ուզո՞ւմ եք նոր «ո» եստեղ։
—ավելորդ ե։
Թողնենք դեռ եդ «ո» ն։
Մանում եք մի հիմնարկ պետական։
Ասենք Զագուր։
Պատից կախված ե Մարքսը։
Պատից—Իլիչը։
Տրոցկին կամ։
Մեր զինանշանն անդամ—
պարզից պարզ ե։
«Մուրճ» ու Մանգաղ»։
Ամեն տեղ—բանվորն ե։

Ամեն տեղ — գյուղացին:
 Վերցրե՛ք մեր դրամը:
 Վրան՝
 — «Պրոլետարներ բոլոր յերկրների — միացե՛ք»:
 Եսպե՛ս ե:
 Բայց թողնենք դեռ ե՛ս ել:
 Մտնում եք գործարան:
 Կամ հանք մի, ձեր տեղում թե կա:
 Հարցնում եք՝
 — ո՞ւմն ե.
 այսինչ — այնինչինը:
 — Զե.
 — Խորհրդային ե:
 Պարզ՝ պետական:



Դուք նորից զարմանում եք:
 Զարմանքից դուք ընկնում եք հալից:
 Վոնց վոր ուտո՛պիա ե,
 Վոնց վոր յերազ,
 Վոր չի՛ ել յերազել դեռ վո՛չ մի դեմոկրատ-
 սոցիալիստ:
 Եսպե՛ս ե:
 Ե՛ս ե:
 Լավ ե, թե վաս—
 հենց ես ե, վոր կա:
 Իսկ հիմա — թողնենք ԵՍ-ԵՍ-ԵՍ-ԵԽԵ,
 գնանք Ամերիկա:

U. S. A.

(Ամերիկա)

Ամերիկան վոր կա—
 վոնց վոր լսել եք,
 վոնց վոր գիտեք—
 գտնվում ե աշխարքի տակին:
 Ամեն ինչ մեծ ե ենտեղ,
 ամեն ինչ — ահագին:
 Ցել են ել — ենքա՞ն ահագին,
 վոր ասեմ — վախենամ ցնդեք:
 Մեկ ել—
 (ինգրում եմ չվախեք) —
 ամեն ինչ — յերեվակայում եք — թարս ե ենտեղ:

Ամեն ինչ:
 Այս:
 Անգամ որացույցը:

Յերբ եստեղ շաբաթ ե—
Եստեղ կիրակի' ե.
յերբ գիշեր ե եստեղ—
Եստեղ լույս ե !
(Բայց, ասենք, ես բոլորը—դեռ հեչ:
Զարմանալի չեն ենքան ել:
Մանրուք են:
Սովորական բաներ:
Արյունը զարմանքից կխփի ձեր գանգին—
յերբ անցնենք հասարակական կյանքին) :



Կարգացել եք:
Լսել եք յերեվի:
«—Ամե՛րիկա!»
«—Դեմոկրա՛տիա!»
«—Դըմախ!»
«—Յեղեմ !»:

—Դըմախ ե, ի՞մարկե—
միլիարդեր եք յեթե!
Միլիարդեր եք յեթե—
յերեվակայում եք.
—ա-մե՛ն—բան—կա !
Զերն են՝
թե Սիպտակ Տունը,
թե Նյու-Յորք Սկ'ալին,
թե—բանկը:
Հենց վոր Նյու-Յորք մտաք—
միլիարդեր եք յեթե—
կհանդիպի ձեզ ինքը—միստր Դոլլարը:
Իսկ եդ միստրը ենտեղ
մարդ չե՞ հո հասարակ—
ալբեղիդենտ ե:


Ո, միստր Դոլլարը պրեզիդենտ ե թեկուզ,
բայց անչափ բարի' ե,
խոնարհ ե,
հասարակ ե—
միլիարդեր եք թե դուք!

Միլիարդեր եք յեթե—
յերկինք ել վոր յելնեք—
դժվար թե հանդիպի ձեզ ենտեղ
եղախի մի քեռի-ջենտելմեն:

Ո, միստր Դոլլարը—իսկական հոգի' ե:
Ծանոթ-անծանոթ նա չունի:
Զի ճանաչում վոչ ազգ, վոչ կրոն:
Զի նայում վոչ դեմքիդ, վոչ անունիդ:
Դուք մեկ եք,
մարդ եք,
հավասար եք նրա աչքերում—

Ընդամենը—յերեվակայում եք—մի՛ մի՛լի՛-արդ
թե ունիք ।

Զարմանում եք ելի՛:
Ավելի՛ն:
Միստր Գոլլարը—իսկական բարեգործ եւ:
Գործը՝
հենց ե՛ղ եւ, ծառայելն եւ հենց սրան-նրան:
Թեկուզ պըեղիղենաւ եւ—
բայց հետդ եւ.
հետդ եւ—ուր ել վոր գնաք !
Մանում եք ուստորան—
նա՛ եւ:
Բանկ եք մտնում—
նորի՛ց:
Միլիարդեր եք յեթե—
հետդ եւ մյուզիկ-հոլլում, ցիրկում:
Պառկում եք քնելու—
հետդ եւ.
աղջիկ եւ մի չքնաղ.
ոռմանսներ եւ յերգում !



Բա՞ս:
Եսպէս ե ես դենդին:
Խուսը կասեր՝ հա՛տե !
Վոնց վոր տեսնում եք
ես
պըեղիղենուը —
վո՛չ միայն զուրկ ե փառքից,
այլ—արխիղեմոկրատ ե !

(Զե՞ք հավանում:
Ինչի՞:
Ես բոլորը չկա՞ հո մեղ մոտ !
Մեղ մոտ,
վոր հյուր ել գնայիք իլյիչին—
շատ-շատ հյուրասիրեր... գեռ չեկած
կոմունիզմով !)

Ավելի՛ն:
Միստր պըեղիղենուը—
ինչ ել տաք՝ կլիզի՛:
Մի բանից ե զզվում.
—իմպերիալիզմից !

Զե՞ք հավատում:
Ասում եք՝ խե՞նթ եմ:
իմպերիալիզմն ինչի՞ն ե մի միստրի,
վորին, վոնց վոր տեսաք, թե խրճիթ, թե սալոն:

Հիշո՞ւմ եք.
հենց
ես
պըեղիղենուն եր,
վոր - 14 պունկտ ներկայացրեց վերսալում !

Զե՞ք հավանում—ի՞նչ ե՞:
Դժգո՞ն եք ես յերկրի պըեղիղենուից !

— Արա՛ ամբողջ Ես-Ես-Ես-Ե՛ռիայում
դտեք եղալիսի մի գենդի !!!

R. F.

(Փրանսիա)

Հիմի գանք Յեվրոպա:
Փարիզ:

Հենց յոր յեկաք Փարիզ—
դեռ կուպեռում գուցե,
Լհանդիպի ձեզ—ինքը ալ. Պուանկարեն,
—Բարե՛վ:—
Կերկարե իր ձեռքը:
Զեռքը կարմիր ե թեկուզ—
բայց վոչինչ.
Հվախենաք.
ձեռքը ձեռք ե:

Պ. Պուանկարեն գալանտ ե:
Վոնց վոր ամեն ֆրանցուզ:
Ձեզ կտա իր թեվը
կանցնեք դուք թեվանցուկ:
Պ. Պուանկարեն եղան ձեզ կտանի—
կնստացնի ոթո:
Ենտեղ,
Ներքեվում,
Կհեվա մի անիվ:
Կթոչեք փողոցներով, վոնց վոր ողով:

Եսպես գալանտ, թեթեվ,
պ. Պուանկարեն ձեզ կտանի ոթել:
Եղտեղ մի փոքր կմանժեք:
Հետո կտանի ձեզ կաֆե—


«Դե զաֆեր Ետրանժե»:
Կաֆեում—
պ. Պուանկարեն ձեզ կտա մի դող կաֆեին:
Կառաջարկե ֆիֆի:
Ֆիֆի չե, ֆրանսական փերի:
Զմերժե՛ք:
Զմերժեք յեթե—
տանու մարդ եք արդեն:
Անգամ
կստանաք որդեն.
կդառնաք—«Ե գրան աֆերիստ»!



Վոր դարձաք՝
Ժամը չորսին
կկանչե ձեզ վորսի:
(Եղ ժամին նա սիրում ե վորսալ:)

Կնստացնի ոթո—
 կտանի վերսալ:
 վերսալում—
 կտեսնեք դուք մի պալատ-սալոն:
 Ամեն—ինչ—կա:
 Բացի են, վոր պետք ե վորսալու!
 Բայց վերսալում դուք վորս չտեսնեք ել թեպետ—
 վոչի՞նչ.
 Կհամբերեք:
 Ո, հին վարպետ ե պ. Պուանկարեն:
 Վո՞րս ե ձեզ պետք.
 —Յերկնքից կճարե!
 Մեկ ել.
 մի փոքրիկ հանգամանք չմոռանաք յերբեք.
 —պ. Պուանկարեն սիրում ե իրավունքը:
 Սոցիալիստ չե թեպետ,
 բայց
 առանց իրավունքի
 չի հանի վոչ ձեր աչքը, վոչ ունքը!
 Ո, վո՞չ,
 վո՞չ մի դեպքում:
 Ամենից առաջ—իրավունք:
 Ամե՞ն ինչ—իրավունքով:
 իրավունքով—թեկուղ
 եղ
 պաշտելի
 իրավունքը—
 մարմացնի հենց ինքը, կամ ժեներալ Դեգուն!
 Եսպես ե պ. Պուանկարեն:
 Պ. Պուանկարեն—
 չի՝ խանգարի յերբեք ուրիշի հանգիստը:
 Անարխիստ եք.
 —Դե՛ աչքերից հեռո՛ւ:

Ե՛ղ ե պատճառը հենց, վոր զզվելի են մուսյոի
 աչքերում—
 առաջինը— Գերմանիան,
 յերկրորդ— կոմունիստը!
 Բայց—
 պ. Պուանկարեն դեմ չե բացառությանց:
 Որ
 —կոմունիստների վերաբերյալ—վո՞չ մի բացա-
 ռություն:
 Այնինչ գերմանացուն—
 կարող ե յեզ սիրել, վոնց վոր իր կնոջը,
 վոնց վոր, յերեվակայում եք, իր հարազատ
 կեսին...
 Ինչո՞ւ չե.
 որ.—
 —Գուգո
 Ստիճնեսին !!



Յեկ մեկ ել,
վորպեսզի ճշմարտությունը չդառնա զուռնա,
պետք ե ասել, վոր նա—
ճիշտ ե, զզվում ե սոցիալիզմից, վոնց վոր
գլխարկից,
բայց—

յերեվակայում եք—
դեմ չե—
Երերտին—

սոցիալիստին!

Ես բոլորի մասին գեկուցելուց հետո—
պ. Պուանկարեն ձեզ կժապտա փութով—
ու

սեղանի տակից—
կհանի մի փութ թուղթ...
կարդա
“Վերսալի Դաշնագիր:”

Կետ-կետ,
պունկտ առ պունկտ
կհաստատի նա ձեզ,
վոր ունի... վորսալու իրավունք:
ինքը:

Կարող եք—յեկ դուք:
Վորսացե՛ք
թե կուզեք վորսալ:
կեսը ձեզ—
կեսը—
կբերեք վերսալ!

Զարմանքից կծում եք ձեր շրթունքը:
Թե մի աչք ունեիք—արդեն չորս ե:
Չե՛ք հասկանում.
եղ
դեռ

իրավունքը.
—բա վո՞րսը!!
Մտածում եք՝
—ինչի՞ս ե իրավունքը,
մի թուղթ ե թե վոր սին!...

Եսաեղ յերկրորդ անգամ
կկծեք ձեր շրթունքը.
յերեվակայում եք.
պ. Պուանկարեն—
կողմնակից ե մի՛-մի՛-այն—զուտ —յերկնաշյին—
վոր-սի!!

Բա՞ս:
Պարոն Պուանկարեն—
կատարյալ ջենտելմեն ե:
Զի՞ զարկի ձեզ յերբեք—
յեթե դեմն եք:
Վորսին սիրում ե զարկել—
մի-մի-այն յերկնքում:
Իսկ թե դեմն ե—
յերբե՛ք:
Վո՞չ մի դեպքում!

Ճենց ես ե պատճառը,
վոր պ. Պուանկարեն—
մի աչքը—Աջա՛րիա,
մյուսը—Մոսուլ ե հառել!

Եսպես ե Պուանկարեն:
Ասպետ ե:
Խոսքի տե՛րն ե:
Ե՛ղ ե պատճառը հենց,
վոր սիրած վորսն ե իր—
մեր

հեռու
Օ Օ Օ Պ.Ռ ! ...

P. S.

Մոռացանք պ. Պուանկարեի օուրուրը—
Բուլը:
պ. Պուանկարեի պարծանքը:
Պարոնի կարծիքով
Եղալիսի չաղ մի վորս—
Հի աեսել դեռ վոչ ինքը, վոչ աշխարքը:

Բուլում—

ածուխ ե, վոնց վոր գիտեք:
Իսկ ածուխը թանգ ե, քան վոսկին,
կամ փղոսկը:

Բայց

ելի—
չավատաք:
Պ. Պուանկարեի ձեռքում—
ածուխն ել—ծուխ ե լոկ,
կամ—
իսուք ե:

Բուլում—

ուր վոր նայեք՝ ծուխ ե:
Վառվում ե ամեն ինչ:
Բայց վոչ—ածուխը:
Թաց ե:
Կարմիր ե մի քիչ ել:

Յեթե իրեն մնար—
ձեզ կղիջեր !

D. R.

(Գեղմանիա)

Հիմի գանք Գեղմանիա:
Գեղմանիան,
վոնց վոր գիտեք—
սոցիալ-դեմոկրատական դրախտ ե,
ի՞նչ եմ ասում.
դրախտը բանտ ե Պոյչանդի հանդեպ !
Փա՛ստ+—
— առավոտից—գիշեր հարսանիք ե ենտեղ !

Հենց վոր իջաք Բերլին
կտեսնեք.
— փողոցի միջով
վազում ե մի չքնաղ ֆրեյլին,
վազում ե.

Հե՛.

թռչում ե.
թռչուն ե վոնց վոր եղ ֆրեյլինը.
ինքը սավառնում ե,
հետն ել զարնում ե թեվին—
իսկ

ամբողջ
Բերլինը—
վազում ե յետեվից ! ...
Ամեն վոք աշխատում ե բոնի:
վազում ե ամեն վոք յետեվից:
կանչում ե,
տենչում ե,
վորն ել վիչում ե հոգին,
աղաչում ե վորն ել սալոնային վոճով—
ու չի բոնում վոչոք !



Ո, գրախտի փերի՛ և եղ ֆրեյլինը:
Չափազանց նուրբ:
Չափազանց փուխր:
Նայում եք—կի՞ն և վոնց վոր.
աչք եք ածում մեկ ել—
չկա.
վոնց վոր ցնորք եր,
վոնց վոր ծուխ եր !

Նայում եք—
հիանում եք՝
եղպիսի մի փերի չի տեսել դեռ աշխարքը:
Անո՞ւնը.
—Գերմանական Մարկ ե !

Անունը,
վոնց վոր տեսնում եք—
պոետիկ չե ենքան ել:
Բայց ինչնի՞դ ե անունը.
հո չե՞ք կշտանա անունով:
Այնինչ ամեն գերմանացի

կրկնում ե եղ անունը,
վոնց վոր տերտերը «հանուն հոր»:

իրեն տված պատվին—
իհարկե, արժանի ե եղ կնիկը.
յերեվակայո՞ւմ եք.
եղ տիկնոջ շնորհիվ—
վո՞չ միայն Բերլինում,
այլ Դոյչանդում ամբողջ զոր-գիշեր—
հարսանիք ե !

Իւքը,
վոնց վոր ասինք,
կարծեք ցնորք ե մի անգու:
Բայց,
չնայած դրան,
զոր-գիշեր թովում ե:
Պարում ե:
Սիրում ե, մամնավորապես, ամերկա-
կան պարեր:

Մամնավորապես—ուանստեղ կամ տանգո !
Պարում ե, բառացի, ամեն վայրկյան ու ժամէ !
Պարում ե ամեն տեղ:
Խտրություն չգիտե:
իր համար—թե խրճիթ,
թե սալոն,
թե Բերլինի բիրժա !

Մոտենում եք.
կարծում եք միտինդ ե:
Բայց չե՛:
Ելի նա՛ ե՛:
Ֆրեյլինը:
Ինքը զարնում ե թեվին,
մարդիկ—յետեվից:

Ֆրեյլինի հմայքին յենթակա
 բարձրանում են պատով.
 ուզում են նվաճեն յերկինքը:
 Անգամ լեզե՞նդա կա.
 ասում են՝
 մի անգամ,
 տկող,
 վոնց վոր Աղամը,
 վաղել ե ֆրեյլինի յետելից—
 ինքը Գիլֆերդինդը !
 Յեկ նա՛ ել,
 եղ փառքը,
 պարծանքը,
 եղ պայծառ ակնածանքը սոցիալ-
 գեմոկրատական Բերլինի—
 յերեվակայո՞ւմ եք
 չե
 կարողացել
 բոնի—
 եղ—
 լիրո—
 ֆրեյլինի ! !

Բայց եղ չե եականը:
 Եականն հետեվյալն ե:
 Այն ե.
 յերեվակայո՞ւմ եք.
 չնայած սոցիալ-գեմոկրատական
 սիրո եղ անշափ չափերին—
 ասում են—
 եղ
 բերլինյան ֆրեյլինը—
 սիրում ե... հասարակ շիբերի !

Մեկ ել
 (ասում են)
 ովկյանոսի վրով
 հյուր ե գալիս նրան—
 իր
 պառավ
 —ամերիկական քեռին !
 . . .
 Դոյչանդի հաջորդ պարծանքը—
 Դոյչանդի պրեզիդենտն ե:
 Եբերտը:
 Ամբողջ սոցիալ-գեմոկրատական Բերլինը
 պաշտում ե Եբերտին, վոնց վոր
 կաթոլիկը պապին:
 Ո, ֆրեյլինի նման
 Եբերտն ել—մի հրաշք ե,
 բայց... հակառակ տիպի !
 Եբերտը,
 վոնց վոր գիտեք—
 սոցիալ-գեմոկրատական մի բերդ ե:
 Անառիկ ե ավելի, քան բերդը:
 Շուրջը փոխվում ե ամեն ինչ—
 ինքը կա:
 Եբերտ եր,
 Եբերտ ել միացել ե,
 Եբերտ ե:
 Եբերտ—
 բերդ ե ամեն բանով:
 Որ—անշարժ ե, վոնց վոր բերդը:
 Ինքը նատած ե անզործ—
 ուրիշն ե բան անում:
 Անշարժ ե, ինարկե, հանուն սոցիալիզմի:



Մի բան ելոկ շարժում—
լեզուն,
Են ել յեղբեմն, յեղբեմն,
վոր Ստիճնեսին լիզի !

Պ. Եքերտը,
թե կամենաք հատուկ,
թե ուզեք՝ հոգսից բարակած—
ձեզ տուն ել կուանի,
յեզ են ել—վոչ թե հասարակ,
այլ—հասարակաց !

Զվախենաք իսկի:
Տանում ե—
գնացեք:
Զքաշվեք—լսում եք—վոչոքից !
Մեկ ե—
ենտեղ
վոչ աղջիկ կտեսնեք, վոչ կին !


Եղ տունը —
տուն չե՞ հո —
դրախտ ե մի հատիկ !
Ճամփին —
վոնց վոր քրիզանթեմ ե ցանած :
Ներս մանելուց առաջ —
վերը —
դրախտի ճակատին —
կկաբդաք՝

II Ի Ւ Տ Ե Ր Ա Ց Ի Ո Ւ Ա Լ

կըկնում եմ՝
դուք ենտեղ
վոչ աղջիկ կտեսնեք, վոչ բող կի՞ն։

Դեռ ներս չմտած—
ձեզ կզրկե նոսկեն։
Չվախենաք։
Թեկուզ—
հենց առաջին պահին—
կտեսնեք մի նստուկ, մի կուզ։
Նոսկեն եղպե՞ս ե հենց։
Մեջքը դժվար ե շտկում։
Թեկուզ զլուխ չունի—
բայց ունի... նստուկ։
Զարմանալի մարդ ե եղ նոսկեն։
Խոսելես նա լիզում ե իր թուքը։
Խոսելիս
մարդ գե՛մքն ե խոսակցին դարձնուա
նոսկեն— նստուկը։





ՅԵՐԿՈՐԴԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Իջնում ե մինչեվ տակը:
Տափակ ե:
Վրան—

Վոնց վոր միս են թակել:

Չե՞ք հասկանում.

Խեղճը—
Դե շատ ե վաստակել!

Բայց չնայած դրան—

Նստուկը դեռ թարմ ե:

Թեկուզ ինքը—

Լինելու ե, կարծեմ, հիմա ծեր:
Վաստակել ե թեկուզ թե կուզ, թե պատիվ:

Չարմանում եք

Խեղճը
Եղ վո՞նց ե դիմացել—

թե Երերտին իրան,
թե Ստիննեսին Գուգո,
թե—պրոլետարիատին !!

Նոսկեին վոր տեսաք—
կարող եք գուք ներս չգնա՛լ ել:
Միյելվույնն ե՝ չեք գտնի գեղեցիկը:
Եղ բախտավոր դրախտում
գեղեցիկը թե կա—
ելի նա՛ ե:

Իր դեմքով դեմը թե մըցի—
Են ել—
Շեյդեմանը գուցե:
Բայց կուզո՞վ.
— չի՛ հասնի յերբեք ել!

Մնացածը—
մեկ ե:

ՅԵՐԿՈՐԴԻ Ա. ՅՈՒԹ ՅՈՒՆ

Տեսաք—
Ներեցեք արտահայտությանս—
Նրանց «գեմքը» !

Տեվ են ել—
Արիվ չե՛ ես սե՛րիան դեռ:

Դե ասեք.—Վո՞նց ե մեր տանը !
Ո, յերկի՞ր իմ !
Ես-ես-ես-ե՛ռիա !

C. C. C. P.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բոլոր պոետներին 5

III Ինտերնացիոնալ - Р. К. II. 8

Անտանտին -Մենք 11

Լենին 14

Մարշ Աշխարհա 17

ՅԵՍ ՅԵՎ ԻԼՅԻԶԼ 21

ՏԻՐԱՊԵՏՈՂՆԵՐԻ ԴԵՄՔՀ 37

ԱՆՈՆՍ

ՍՊԱՍԵՑԵՔ ԶԱՐԵՆՑԻ ՀԵՏԵՎՅԱԼ

Գ Ր Ք Ե Ր Ւ Ն

1. ԱՆՏԻՖԱՌԻԱ 2. ԶԱՐԵՆՑԸ ՊԻՆԿԵՐՏՈՆ

ГЛАВЛИТ 20853

ТИРАЖ 600

ԳԻՆԸ ՄԻ ՌՈՒԲԵԼԻ

4

<<Ազգային գրադարան



NL0351739

9895-3